ուղղակի մեր Վենետկեան կրկին ձեռագիրներէն՝ որոնց վերեւ ծանօթացանք։

Րաֆֆի Հ. Միքայէլ Չամչեանի պատմութենէն զատ՝ ճանչցած է միայն Արզար Ստեփանոսեան Գուլամիրեանցի հրատարակութիւնը կատարուած ի Վաղարշապատ – Էջմիածին 1871ին։ Այդ գործին բացատրական երկար տիտղոսն իսկ շատ մը տեսակէտներ կը պարզէ՝ որոնք պիտի լուսաբանեն կամ հաստատեն մեր նախապէս ըսածները նկատմամբ Դաւիթ բէկի պատերազմները պատմողներուն ու գրի առնողներուն։

Ահա տիտղոսը մատնանշուած գործին.

«ԴԱՒԻԹ ԲէԳ. ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին եւ պատերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ Հայոց 1171։

Զորս ետուն գրել, որք ի սկզբանն մինչեւ ցվախճան յառաջադէմ լեալք էին յամենայն պատերազմունս, և սկսեալ իւրեանց եղելոց, այսինքն Ստեփաննոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէն փոքր Սիւնեաց, և յաւանէն Եկտատեանց, և այլ ոմանք ընդ նմա, ...
. . . . . . Վարդապետի . . »

Հոս, ինչպէս յայտնի է, նախ կ'ակնարկուի ժամանակակից դէպքերու որոնք տեղի կ'ունենան 1722ին իբր « ի մերում ժամանակի». ուրեմն ԺԸ դարու գործ է, զոր Գուլամիրեան փոյթն ունեցած է հրատարակելու մեծ գուրգուրանքով։

Յետոյ կ'ըսուի թէ (Դաւիթ բէկի) պատերազմներուն մէջ յառաջադէմ սկսեանք են որ գրել տուեր են, և յականէ անուանէ կը յիշատակէ Ստեփաննոս Շահումեանը և դեռ ուրիշներ ալ իրենց հետ։ Այս վերջին բացատրութիւնն էր որ տեսանք վերեւ, վանքիս ձեռագրաց ցուցակին մէջ, գրուած Հ. Մկրտիչ Աւգերեանէ 1791ին՝ Դաւիթ բէկի պատմութեան յիշատակութեան մէջ, այս տարբերութեամբ միայն որ հոն Աւետիք քահանան էր որ յայտնապէս շեշտուած էր, իսկ հոս՝ Ստեփանոս Շահումեան։

Սակայն իսկոյն հոս ըսելու ենք թէ Արզար Գուլամիրեանի ձեռագիրը իր սկիզբով խարդախուած է։ Սկիզբը ջնջուած է Մխիթարեան Վարդապետի՝ Հ. Ղուկաս Ստեփանեանի անունը՝ որ ամենայն հաւանականութեամբ կար նախապէս։ Գուլամիրեան անդրադառնալով կը գրէ. «Բայց ցաւում ենք շատ, որ չկարողացանք գտնել այս ազնիւ Պատմագրութեան բուն հեղինակը, պատճառ անխոհեմ և անզգայ մարդիկ անհետացրել են սոյն ազնիւ հեղինակ վարդապետի անունը, ջնջելով նորա անունը և տոհմանունը՝ մի միայն վարդապետ բառը թողլով, ինչպէս մենք եւս թողուցինք աճա, որի համար շատ տեղեր և պատմագրութիւններ փնտռելով չկարողացանք և ո՛չ մի տեղ գտնէ ծանօթութիւն ինչ գտնել[1]»։

Պիտի տեսնենք յետոյ որ խարդախուած է նոյնպէս Աւետիք քահանայի վերաբերեալ պատմական կէտ մը՝ գրքին վերջը։

Բրոֆ. Ն. Ադոնց Աւիշանի «Սիսական»էն փոխ առնելով իսկոյն կը յայտնէ եղծուած անունը. «Յայտնի է որ ծածկանուն վարդապետը Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացին է, Մխիթարի աշակերտ։ Նա է որ գրի է առել ինչ որ պատմել է Ստեփանոս Վրթանիսեան Շահումեանը[2]» եւն։

Իսկ Րաֆֆի որ Չամչեանի պատմութենէն զատ իր առջեւն ունէր Գուլամիրեանի այդ հրատարակութիւնը վերնագրի բացատրական մանրամասնութիւններով՝ սկեպտիկ ձեւով մը կ'արտայայտուի անոր մասին իր « Խամսայի Մելիքութիւններ[3]»ուն մէջ. « Այդ հետաքրքիր պատմութեան հեղինակը մինչեւ այսօր մնում

1. Տես հրատարակութեան յառաջաբանը, էջ Ժ։

2. Տես «Դաւիթ բէկ» վէպի պատմական հիմը և գաղափարախօսական արժէքը» յօդուածը՝ «Րաֆֆի–կեանքը, գրականութիւնը, յիշողութիւններ» լոյս ընծայուած ծննդեան հարիւրամեակի առթիւ (1837–1937), հատորին մէջ, էջ 122–148 Տպ. Խ. Մաթիկեան, Բարիզ, 1937, էջ 168.

3. Էջ 395։